ՀԱԿԻՐՃ՝ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՍԻՆ

Ղարաբաղի բարբառը, ըստ ձևաբանական դասակարգման, պատկանում է «ում» ճյուղին, ըստ բագմահատկանիշ վիճակագրական դասակաբգման՝ արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիս-արևելյան միջբարբառախմբին: Խոսվում է ԼՂՀ-ում և նրան սահմանակից շրջաններում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի և Միջին Ասիայի հայաբնակ վայրերում: Ղարաբաղի բարբառը հարուստ է ենթաբարբառներով ու խոսվածքներով:

Ունի երկաստիճան ձայնեդագուրկ բաղաձայնական համակարգ. բառասկզբի դիրքում գբաբարի ձայնեդ պայթականների և կիսաշվականներբի դիմաց խուլեր են: Շեշտը վերջընթեր է: Գոյականի հոգնակիակերտ մասնիկներն են՝ էր, նէ, քյ: Հոլովները հինգն են: Անորոշ սեռականը կազմվում է ու (սարու), որոշյալը՝ էն, ին (սարէն, սարին) թեքույթներով, բացառական-գործիական հոլովներբն ունեն համադրական ու վերլուծական կազմություններ (մարթուն, մարթին անա, մարթին նըէստա, մարթով, մարթու անավ, մարթու նըէստավ):

Պահպանվել են հին հայերենի անձներական թվականները (երկոքեան-ըրկօքան): Ունի է, ի, ա խոնարհումները, ապառնի դերբայը կազմվում է ական (ան), վսդակատարը՝ ալ (էլ) ձևույթներով. չկա ժխտական դերբայածև: Օժանդակ բայի անցյալի ձևերն են՝ ի, իբ, ար, ինքյ (իքյ), իքյ, ին: Հարկադրական եղանակն արտահայտվում է ա, պիտի, բիդի, բէդմա եղանակիչներով (բէդմա խօսիմ), խոնարհվող պիտիմ բայով ու անորոշ դերբայով (թակէլ պիտիմ, թակէլ պիտիս):